ԿԱՅԱՑԱՎ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳԱՎԱԹ 2022» ՄՐՑԱՇԱՐԸ

18.04.2022 14:39

2022 թվականի ապրիլի 16-ին Փաստաբանների պալատում տեղի ունեցավ «Փաստաբանների շախմատի գավաթ 2022» մրցաշարը:

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանները և Փաստաբանական դպրոցի ունկնդիրները սև ու սպիտակ խաղաքարերի լարված և միաժամանակ հետաքրքիր մրցապայքար ունեցան:

Առաջին պատվավոր տեղում հաղթող ճանաչվեց փաստաբան Ջոհրակ Ապրեսյանը:

Մրցաշարում 1-ից 8-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները պարգևատրվեցին պատվոգրերով և մեդալներով:

Ոսկե մեդալով պարգևատրվեցին փաստաբաններ՝

Ապրեսյան Ջոհրակը, Մեժլումյան Կարենը, Սիմոնյան Էրիկը, Ղազարյան Դավիթը:

Արծաթե մեդալով պարգևատրվեցին փաստաբաններ՝

Մուրադյան Էդմոնդը, Շահմուրադյան Աշոտը, Վարդանյան Արմենը և Գրիգորյան Արմենը:

Մյուս մասնակիցները ստացան հավաստագրեր՝ «Փաստաբանների շախմատի գավաթ 2022» մրցաշարին մասնակցության համար:

Մրցաշարի արդյունքներով լավագույն խաղացողներից կձևավորվի ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })